

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ  
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ  
 Եամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտք է ուղղել առ  
 Տէրին. ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի  
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

# ԱՐՇԱՆՈՅՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկե.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան Ձրակի	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղութեամբ  
 գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
 Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN  
 Direc.-propr. du journal arménien  
 ARCHALOUYCE  
 LE CAIRE (EGYPTE)

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՐՔՈՐ ԵՒ ՇԱՐՔՈՐ

#### ԽՐԱՏԱՐԱԿԱՆ ԱՉԳ

ԱՐՏԱՍՈՒՀԻՄԱՆԻ Պատ. քաժաւ  
 Անողներէն յերմայես կը խնդրուի որ քա-  
 ղաքանիսն նախորդ տարիէն մնացեալ պար-  
 տոց կցելով որկեր նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ  
 Տարեցրանի քաժաւնորդագիրը, եւ հասկ  
 յը քողոյ մասնաւոր քիւնուներու, որոնք  
 նոր դժուարութիւն մը պիտի չ'ընեն ԱՐՇԱ-  
 ՆՈՅՍԻ արդէն քաղաքացի Տէօրինութեան :

#### ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

× × ×

Քաղաքակրթեալ բազմամարդ երկիր-  
 ներու մէջ ուր մարդ միշտ պատեհութիւն  
 կ'ունենայ, գրեթէ կ'առիպուի ընտանեկան  
 սերտ յարաբերութիւններ մշակելու, մար-  
 դաց հետ մօտէն շփուելու, շատ մը իրար-  
 մէ տարբեր միջավայրերու մէջ մտնել-եւ-  
 նելու, ի՞մ կարծիքով, եթէ ոչ անկարելի  
 քեթ խիստ դժուարին է մարդկային նկա-  
 ռագիրները խորապէս ուսումնասիրել, և  
 ճանչնալ անոնց խիական որոշ գոյնը :

Արքան սուր և թափանցող ըլլայ միտք  
 մը, կեանքի, աղմուկի, մտահոգ և շարու-  
 նակ զբաղեալ վիճակի մը մէջ չ'է որ պի-  
 տի կարենայ լուրջ ու լարուած հետաքրք-  
 ըութեամբ ինչեւ ուրիշի մը հոգւոյն մին-  
 չե խորերը, և քննել ու քրքրել անոր ներ-  
 քին-մարդը . . . Ասկէց զատ՝ գեմբերը կը  
 փոխուին յաճախ. սերտ կարծուած յարա-  
 բերութիւնները կը խղուին յանկարծ այլև-  
 այլ պատճառներով. երբեմն անճանկան  
 գործերն ու զգալուներն ալ չեն ներեր որ  
 յաճախակի տեսութիւններ ունենայ մարդ  
 իր ճանտութիւններուն հետ . . . Ինչ արած . . .  
 ասոնք քաղաքակրթեալ երկիրներու յա-  
 տուկ վիճակներ են . . .

Երբեմն սակայն, դժբաղդարար քիչ  
 անգամներ, կը ներկայանան այնպի սի պա-  
 ռագիրներ՝ յորս նկարագրի մը, կամ նկա-  
 ռագիրներու ամենէն թագուն խորչերը, ա-  
 մենէն աւելի ինամբով ձածկուած կողմե-  
 ըր յանկարծ փայլակի պէս Վերկապարանոց  
 երեան կուգան :

Այդ հաղուագիւտ պարագաներէն մէ-  
 կրն ալ, մեր Ազգային Յեղափոխութիւնը ե-  
 ղաւ, որը առիթ տուաւ մեզ մէկ անգամէն  
 ճանչնալու նկարագիրներ՝ որոնք թէպէտ  
 տարիներէ ի վեր մեզի մօտ՝ սակայն մեզ  
 անծանօթ մնացեր էին . . . և զորս պատ-  
 ուեր, յարգեր, սիրեր էինք անհուն գուր-

գուրանքով մը . . . Տէսանք հրեշտակի դի-  
 մակներու տակ՝ կարգ մը հրեշներ . . . և  
 ապշեցանք, ցաւեցանք, լացինք, 'ողբա-  
 ցինք, պոռացինք, գոռացինք, յուստես ե-  
 ղանք, անհաւատ դարձանք . . .

Այդ դէպքերը սակայն, թէպէտ ան-  
 հունապէս ցաւալի՝ ունեցան իրենց մեծ և  
 փոխարար նշանակութիւնը : Նախ՝ ատոնք  
 բով մը եղան, ուր գտուեցաւ Ոսկին՝ Պը-  
 ղինձէն. այսինքն յարգին և Արժէքաւոր՝  
 անարգէն ու կեղծէն . . . Երկրորդ՝ գործ-  
 նական գաս մը եղան մեզի, որոյ շնորհի-  
 թէպէտ քիչ մը ուշ՝ հասկցանք ու սովորե-  
 ցանք վերջապէս թէ՛ նախ պէտք է ճանչ-  
 նալ, և ապա յանձնել մեր սիրտը, մեր բա-  
 զուկը, մեր կեանքն անոնց որոնք կոչուած  
 են մեզ առաջնորդելու Սուրբ Նպատակին  
 որուն կը ձկտինք . . . և որոյ համար տը-  
 ուի՛նք, և պատրաստ ենք դարձեալ տա-  
 լու մեր սրտին ամենէն ազնիւ մասը, և մեր  
 արեան ամենէն վերջին կաթիլը . . .

Այսպիսի առիթներ, ինչպէս տուաւ  
 մեզ մեր Ազգ. Յեղափոխութիւնը, յաճախ  
 չեն ներկայանար ըմբի՛նք վերը-և մենք ա-  
 ուանց բացառիկ դիպուածներու սպասելու,  
 մեր առօրեայ կեանքին մէջ՝ ջանանք ճանչ-  
 նալու, քննելու, զննելու, հոգին այն մար-  
 դուն՝ որոյ հետ կը կապուինք բարեկամա-  
 կան կամ ընկերակցան սերտ կապերով :

Ղնտրել գիտնանք . . .  
 Շատ անգամ համակրելի կամ գեղե-  
 յիկ դէմք մը, քիչ շատ մշակուած միտք  
 մը, փայլուն խօսուածք մը բա՛ւ է որ մենք  
 շքանանք, և տանք մեր սիրտն ու հոգին  
 անմիջապէս՝ ինչպէս մարդ կուտայ իր սի-  
 կառի տուփը, թաշկինակը կամ գաւազանը  
 . . . և երբ տարիներու, շատ անգամ ալ  
 մի քանի ամիսներու ընթացքին մէջ կը  
 տեսնենք այդ սիրելի բարեկամը անազնիւ,  
 ցածոգի, անճնասէր, ծանր յուսախաբու-  
 թիւն մը, պատրանքներու ամենէն սոսկա-  
 լին, կը դառնացնէ մեր միտքն ու սիրտն,  
 և ա՛լ կ'սկսինք նկատել համայն մարդկու-  
 թիւնը հրեշ՝ որ հրեշներու ծնունդ կուտայ  
 միայն . . . սակայն կը սխալինք . . . Մարդ-  
 կութիւնը հրեշտակներ ալ կը ծնանի՝ քիչ  
 անգամներ իրաւ՝ բայց կը ծնանի վերջա-  
 պէս, և յանցանքը իրը չ'է՛ եթէ մենք չենք  
 գտնել զանոնք . . .

Եթէ մարդ իր ֆիզիկական առողջու-  
 թեան համար կը խնդրէ ներթական լաւ սը-  
 նունդ, հացին, միսին, իւղին ազնուագոյն  
 տեսակը կը փնտռէ, որքան աւելի ուրեմն  
 պէտք է հոգ տանի իր հոգեկան առողջու-

թեանն ալ, որը մարմնականէն շատ իսկ գե-  
 րազանց է . . .

Հոգւոյ Մտուեղը՝ Սէրն է . . . ուրեմն  
 ո՛ր աստիճան մաքուր, անշահախնդիր,  
 ազնիւ, բարձր Սէր պէտք է փնտռէ ան,  
 որպէս ի հոգին առողջ ըլլայ, և զերձ՝ ամեն  
 տեսակ բարոյական տգեղ հիւանդութիւն-  
 ներէ . . .

Ճիշտ այս պատճառներով՝ յարաբերու-  
 թիւնները ըլլա՛յ ընտանեկան, ըլլա՛յ ըն-  
 կերական ընտանոք ստեղծուելու են . . .  
 « Բարեկամ » անունը խիստ թանկագին է .  
 և պէտք է շուայլօրէն գործածել զայն . . .

« Բարեկամ » անունը տալու է միայն  
 անոր՝ որոյ հոգին ճանչցած ենք՝ կը կրկ-  
 նեմ մինչեւ իր ամենաթագուն ծաղբերուն  
 մէջ, և որոյ սրտին կրնանք վստահիլ ա-  
 մեն տեսակէտներով, այն ատեն ա՛լ յուսա-  
 խաբ ըլլալու վախը չենք ունենար . . .

Եւ սակայն, ինչպէս վերը կ'ըսէի, ի՞մ  
 կարծիքով՝ գժուարին է կեանքով քաղմու-  
 կով, շարժումով եզուն միջավայրերու մէջ  
 նկարագիրները խորապէս ուսումնասիրել . . .

(Շարունակելի) ԳՍՈՒԻ  
 1900 Դեկտ. 1 Նիկոսիա  
 (Կիպրոս)

#### ԲՐՕ ԱՐՄԵՆԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԵՒ Բ. ԹԻՒՆԵՐՈՒ

Ա. ԹԻՒ. — Յայտարարութիւն. ԽՂԻ-  
 ԲԱԳՐՈՒԹԻՒՆ. Բրօ Արմէնիա. — Բ. ԳԻՅ-  
 ԵԱՐ: Արիւնաշարախ ձեռնէրը. — ԳԼԷ-  
 ՄԱՆՍՕ: Չարք եւ Հայերը. — Ֆ. ՏԸ  
 ԲՐԷՍԵՆՍԷ: Հայաստան Համաժողովներու  
 առջեւ. — Ժ. ԼՕՆԿԷ: Արեւելեան շու-  
 րեր. — Բ. Գ.

Բ. ԹԻՒ. — Մեր ընթերցողներուն. —  
 ԽՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ: Հնէգէսասանեակ. — Բ.  
 ԳԻՅԵԱՐ: Հայերու Ազգային ժողովը. —  
 Թուրք ոսկիականութիւնը. — Ռ. Բաժակա-  
 ձառ Խաղաղութեան Համաժողովին մէջ. —  
 ՍԷՎԷՆԻՆ: Հայ Որբակրկներէն Հասաս-  
 սագիրներ. — Նամակ առ Հայս. — Ման-  
 մոս Փաշա. — Այսիւր Համիսի մէկ խօս-  
 ք. — Արեւելեան շուրեր. — Բ. Գ.

Բաժանորդագրութիւն կանխիկ 10 Էրանի  
 տարեկան: Անոնք որ կուզեն քաժաւնորդա-  
 գրուիլ առջև կարճաւ հաւեղիսին, կրնան  
 դիմել « Արշալոյս »-ի Խոնարարութեան .

ՀԱՅ ԱՔՈՐԱԿԱՆՆԵՐ Ի ՍԱԽԱԼԻՆ

Կովկասէն թղթակից մը հետեւեալը կը գրէ «Բիւզանդիոն»-ի, զոր կարտապահներ իր հետաքրքրական պարունակութեամբ համար :

Ասիայի մայր ցամաքից թաթարական ներդուցով բաժնուող Սախալին կղզին կը ներկայացնէ անտառապատ լեռները շղթայ մը . տեղ տեղ կտրատուած խոր ձորերով եւ գետերի հովիտներով հոսող բազմաթիւ առուակներն ու գետերը իրենց սառնորակ ու գոլ ջուրերով եւ շոճիթի, թզենիթի, կաղնիթի եւ այլ անտառներով պատած լեռները, որոց գագաթները բարձրութիւնը կը հասնի մինչեւ 2000 ոտքի, կը յիշեցնէ Կովկասի բնութիւնը :

Այս ջուրերու մէջ կ'որոտցուի ի միջի այլոց նաեւ կարմրախայտ ձուկը : Կղզիին օդն Ասիայի մայր ցամաքին վրայ գտնուող մի քանի քաղաքներու (Վլատիվոսթօք, Սարատովսք, Նիքոլայեվսք) օդէն անհամեմատ առողջարար է, այդ պատճառով արտարականները չնայելով իրենց կրած ծանր աշխատանքներու, բայց մեծ մասին առողջ են, եթէ ի նկատ չառնենք այն հոգեկան հիւանդները, որոնցմով լեցուն են հիւանդանոցները : Հոգեկան հիւանդութիւնները պատճառները բանտային կեանքի պայմանները կը կազմեն :

Սախալինը բաժնուած է երեք շրջանի Կորսակովսքի, Ալէքսանտրովսքի եւ Տիմոֆսքի : Ասոնց առաջինը կղզիին հարաւային մասն է, իսկ կերպիւն երկուքը հիւսիսային : Ի Սախալին այժմ կը գտնուին մօտ 200 հայ արտարականներ, որոնցմէ մօտաւորապէս 50 ը Կորսակովսքի կողմէ, 65 ը Տիմոֆսքի եւ 85 ը Ալէքսանտրովսքի : Ալէքսանտրովսքի եւ Տիմոֆսքի շրջաններն ապրող Հայերուն 12 ը զանազան ցեղէ կանանց հետ ամուսնացած են եւ ունին ժառանգորդներ : Ասոնցմէ 3ն Ալէքսանտրովսքի են, 1 Երուանցի, իսկ մնացեալները Գանձակցի եւ Ղարաբաղցի : Հայ ընտանիքների թիւն է 5 : Ղարաբաղցի Հայ կիւն մը Հուրի Արզումանեան, կը կենակցի մի Լէզիկի հետ եւ ունի ժառանգներ : Այդ ընտանիքի անդամները բոլորը ասորեր կրօններ ունին, մայրն հայագուան, հայրը . . . պուտտայական, ժառանգները ուստաղաւան եւ կաթոլիկ :

Հայերը նիւթականապէս գոհացուցիչ վիճակի մէջ կը գտնուին առեւտուրի շնորհիւ, բարոյապէս եւ Սիպիւրի Հայերէն շատ բարձր են : Ամենայն համբերութեամբ ամուրի կեանք կը վարեն, յոյս ունենալով որ մի ներում կ'ստանան

նան եւ կը վերադառնան ծննդավայր, իրենց սիրելիները գիրկը : Մինչդեռ Սիբիւրի Հայերը ըստ մեծի մասին, մինչեւ վերջին անբարոյապահանութեան տիղմին մէջ խղղուած, մէկ մէկ օտարազգի տարիուհի առած զանազան գարեջրատուններ կը պահեն, որոց մութ խորշերը անառականոցներ կը ներկայացնեն : Ծննդավայրերէ զրկուած այդ ափ մը Հայերը փոխանակ սիրով ու միաբանութեամբ ապրելու, ընդհակառակն խորին ատելութեամբ համակուած ամէն միջոց ի գործ կը դնեն միմեանց վնասելու, իրարու տուն քանգելու, իսկ եթէ կան մէկ երկու հոգի որք իրենց բարձր խրատներով կ'աշխատին սէր եւ միաբանութիւն հաստատել այդ պիտիներն եւս այնքան կը զգուցեն որ վերջիններն ճարահատուած կ'ստիպուին չէզոք դիրք բռնել :

Սախալինի Հայերը շատ սիրով կ'ապրին իրարու հետ եւ դժբաղդութեան դէպքերում ամէն կերպ օգնութիւն կ'ընեն միմեանց : Կ'ստանան Հայերէն թերթեր, ասոնցմէ զատ բաւական քանակութեամբ գրքեր եւս բերել տուած են . այժմ իրենց առօրեայ հարցն է Հայկական մատուռի հարցը . ամէն ոք մի որոշ գումար մէկ կողմ դնելով դրամ կը հաւաքէ մատուռի շինութեան ծախքերը արտօնուած Հայերուն հետ հոգալու համար : Անհամբեր կ'ուպանեն Հայ քահանայի մը գալուին . այդ մասին քանի քանի հեռագիրներ զարնուցան այս ու այն կողմ, բայց յուրիս այ անհետեւանք մնացին, մեր հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնը գուցէ բոլորովին կորսուած կը համարէ այս հեռուոր արտարակայրն ապրող իր հարազատներն եւ կամ թէ զանազան վերանորոգութիւններու համար տասնեակ հազարներ ծախսող հարուստ եկեղեցիները գուցէ կը խնայեն մի ջնջին գումար յատկացնելով Սիպիւրի եւ Սախալինի շրջուն հովուին ծախքերը հոգալու համար . ճիշդ են արդօք ենթադրութիւնները :

Թէ Սիպիւրի քաղաքները եւ թէ Մախալին բնակող ամէն ազգ ունի իր ազգութեան ընտանիքն է : Իսկ խեղճ Հայերը տարիներով կարող մնացած են իրենց մայրենի եկեղեցոյ հոգեվայր շարականներէն, խիստ գովելի է վերջիս արտօնուած մի քանի անձնաւորութիւններու վարմունքը որով անոնք գոնէ արուեստ մեծ աստիներուն Մուսնիքի եւ Ջատիկ ճրագաւորցին ի մի հաւաքելով տեղացի Հայերը (Ալէքսանտրովսկցի) որեւէ մէկուն տան մէջ կ'երգեն պատշաճաւոր տաղերն, շարականները եւ նշխարքով ու գինիով հաղորդելով հոգեւոր միութեամբ իւր կը գտնեն :

գտնել, սկզբունքը արդարացնելու համար : Երբ Ռիւթէր եւ Հավաս երկուքը մէկանց ծանուցին Կ. Պոլսոյ երկրաշարժը, ինչպէս ըստ եղբարք, առաջին անգամ լինելով փառք տուի Աստուծոյ, այսպիսի առիթ մը ներկայացնելուն համար : Ուղղակի ներքին գործոց նախարարին դիմեցի անոր հովանաւորութիւնը խնդրելու, որ ամենայն սիրով ընդունեց, պայմանաւ որ հասոյթին մէկ մասը արկածեալներուն զրկուի : Մանաւանդ թէ՛ անոնց ո' եւ է կերպով օգնողները կըրթիկ ճշմաներ պիտի ունենան իրենց կուրծքին վրայ . . . թուրք կառավարութիւնէն շնորհուած :

Արդ՝ խնդիրը կը մնայ Գեապանացի եւ Նախարարաց վայելուչ զայգահանդէս մը պատրաստել :

ԹԱԹՕԵԱՆ . — Յարգահանդէս . . .

ՇԱԹՕԵԱՆ . — Այո՛, ցայգահանդէս . ես՝ ինչ կ'ուզեմ . մտիկ ըրէ՛ք . ինչպէս խօսուեցաւ պահ մը առաջ, իմ Հէլուան երթալս Կ. Պոլսոյ քանին համար է . որովհետեւ կը մտածեմ որ քաղաքի մէջ ուր որ ալ կազմակերպենք մեր հանդէսը, ժխորը մեղի պիտի ըջրպատէ « Ազգային հանդէս » ըսելով, ասոր համար Հէլուան շատ յարմար դատած եմ իր հեռաւորութեան . իւր գիրքի թարգմանքն է, եւ նամանաւանդ իւր սքանչելի պարտէզին համար, ուր կարելի է, շինանալի պիտի մը պատրաստել, լոյս,

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ . — Գեր . Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան կերակի օրը Ռուսական ՉիՀԱՉՁՅ շոգեհաւով Աղէքսանդրիա հասած է :

Կառավարական հրամանով Նորին Վրսեմութիւն Մահմուտ փաշա Սիպիւրի, կառավարչատան առաջին օգնականը շոգեհաւըրկած է բարի դալուստ մաղթելու համար Նորին Գերապատուութեան :

Աղէքսանդրիոյ Հայ գաղթականութեան երեւելիները, կղերական դասը եւ Գահիրէի Հայ գաղթականութեան ներկայացուցիչները, ինչպէս եւ կղերականները, շոգեհաւ դացած են, Նորին Գերապատուութիւնը ընդունելու :

Մաքսատան քարափէն Նորին Գերապատուութիւնը ընկերակցութեամբ Հայ գաղթի ներկայացուցիչներուն, եւ հետեւորդուած ձիւտոր ստիկան զօրքերով, Աղգ . Սուլիորդարան դացած է, ուր պաշտօնական ընդունելութիւն եղած եւ ճառեր արտասանուած են :

Հաւանական է որ կ'ըսէ՛ Բիրաւիս թերթը, Նորին Սրբազնութիւն 10 օրի չափ մնայ Աղէքսանդրիա եւ յետոյ գայ ի Գահիրէ :

Բիրաւիսի այս կարծիքը սխալ ըլլալու է, որովհետեւ Գեր . Այվազեան Եպիսկոպոս այս առաւօտ Գահիրէ կը հասնի եւ այդ է պատճառը, կ'ըսեն, որ Հայոց սրճարանը Օսմանեան եւ Յունական դրօշակներով զարդարուած էր :

ԵՂԱՅՐԱՍՊԱՆԸ . — Ասկէ առաջ արդէն քանիցս դրուած է այս էջերուն մէջ յոյն եղբայրասպան ժամն Տէմոնձանթօի նկատմամբ .

Ամսոյս 24 ին Աղէքսանդրիոյ մէջ հարցաքննութիւնը աւարտելով, մահուան դատապարտուած է . իսկ կիւնը, որ մեղաւոր էր դատապարտելոյն, երկու տարուան բանտարկութիւն պիտի կրէ :

ՄԵՐ ԱՆՑԵԱԼ երկու թիւերով ծանուցած էինք թէ՛ ամսոյս 23 ին Շարա-Ապտիւլ-Աղիզի թատրոնին մէջ Հայ Թատերասիրաց

լուսավառութիւն, փոքրիկ յուսուած, նուազ, նուազահանդէս եւ ազգային երգեր, կազմեց Ներկայացում եւ Ապտօ պէյ, պարսարան, պար եւ պարահանդէս, վերջապէս ինչ ըսեմ, հուր, արեւ, խաղաղութիւն եւ մանաւանդ թառցիկ լապտերներ, որոնք օրին մէջ թռչելով բերուաւոր մարդ էակաց ուղարկութիւնը պիտի հրաւիրեն, եւ որոնք պիտի ստիպուին շատ բարձրերը ակնապիշ դիտել եւ երկնակամարին աակ թռչող գոյնզգոյն լապտերը, ի նպատակ ընկերութեան կազմակերպուած ցայգահանդէսի գոյու թիւնը պիտի հաստատէ : Այս ամենուն դիւրութիւն կ'ընծայէ մեզ Հելուանի տեղն ու գիրքը ԹԱԹՕԵԱՆ . — Ըսելէ Գաղիացեոց Յուլիս 14 ի սօնին պիտի հաւասարի :

ՇԱԹՕԵԱՆ . — Աւելի շքեղ, որովհետեւ մեր հանդէսը Պոպ-էլ-Լուքի կայարանէն պիտի ըսկալի, մինչ Հէլուանի բարձանց վրայ, ուր անգղիական զինուորական նուազածուաց խումբը հայկական քայլերը պիտի հնչեցունէ մեր հանդէսը բանալու համար :

ՕՏԱԾԵԱՆ . — Սքանչելի՛ բան . երանի՛ թէ օր մը առաջ լինէր եւ տեսնէինք . . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Շուտով կարելի՞ է այսպիսի մեծ հանդէս մը կազմակերպել . ես շատ մը դժուարութիւններ կը տեսնեմ այդ բանին մէջ :

ՇԱԹՕԵԱՆ . — Բնաւ դժուարութիւն չէ մնացած . երկաթուղւոյ վարչութեան հետ ան-

Թ Ե Ր Թ Օ Ն  
Ը .  
Ի Ն Գ Ո՛Ւ Զ Ե Ն Ք Յ Ա Ջ Ո Ղ Ի Ր  
ՏԵՄԻ Ե .  
ՆԻՍՏ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

(Շարունակորիւն նախորդ թիւին)  
ԱՏԵՆԱՊԵՏ . — Ընչո՛ւ խօսելով, տակաւին ես ալ չ'կրցայ բան մը հասկնալ, կաղաչենք որ բացատրես մեզի . (ամենքն ալ կը ձայնակցին ատենակապին, եւ Շաթօեան կը պարտաւորի հետեւեալ բացատրութիւնը տալ) : Երբ ներկայացում տալը մերթեցի, պատճառն այն է որ՝ թատընը հասարակութեան գիւրամասնելի է եւ հոն այսպ քաղցրը հասարակութիւնը կը յաճախէ . մեծ մարդիկ հոն չեն մտնար . ուստի այս անգամ մտածած եմ ա՛յնպիսի բան մը ընել, կամ մի հանդէս սարքել, որ միմիայն մեծամեծները կարող ըլլան ներկայանալու : Ինչպէս գիտէ՛ք, մեր ընկերութիւնը կառավարութեան վաւերացեալ չէ, պայտօնական կերպարանք մը իմ ձեռնարկին տալ՝ չէր կարելի . ուստի կը խորհէի բարեգործական անունի տակ գնելու պատճառ մը

խուճը պիտի ներկայացնէ ՎԱՀԱՆ ՄԱՄԻ-  
ԿՈՆԵԱՆ կամ Շառաղաւի պատերազմը :

Կիրակի օրը անձրեւներ տեղալ սկսե-  
լով և մանաւանդ Գահիրէի փողոցները , ցե-  
խերու պատճառաւ անանցանելի վիճակի  
վերածուելով , Հայ թատերասիրաց խում-  
բը ստիպուեցաւ առաջիկայ Դեկտ. 30 ի  
Կիրակի երեկոյեան յետաձգել իւր ներկա-  
յացումն :

ՄԵՐ ՅԱՐԳԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ԱՎՈ , որ  
քանի մը ամիսներէ ի վեր Ռուսաստան մեկ-  
նած էր , Ռուսահայերը և անոնց ազգային  
վիճակը ուսումնասիրելու համար , էջմիածնի  
մէջ սիրալիւր ընդունելութիւն գտած է Վե-  
հափառ Հայրիկէն և քանի մը օրեր էջմի-  
ածնի մէջ մնալով , յաջորդարար տեսակցու-  
թիւններ ունեցած է ն . Ս Օծութեան հետ  
և այս առթիւ ն . Ս Օծութեան հետաքրք-  
րիւր հարցմանց պատասխանելով , ընդարձակ  
տեղեկութիւններ տուած է եգիպտոսի ազ-  
գայնոց և ազգային գործոց վրայ :

Բիշ ատենէն Գահիրէ պիտի հասնի մեր  
յարգելի աշխատակիցը և ինչպէս Սրբալոյ-  
սի միջոցաւ արգէն հրատարակուած է , իւր  
Հանդէսի հրատարակութիւնը պիտի սկսի :

ԵՐԵՎԱՆ 25 Դեկտ . Գալստեան ազգային  
վարժարանը փակ է եղեր , Լատինաց Տօնին  
պատճառաւ :

Մեր նոր համալսարանական Տնօրէնը ,  
եթէ Կիրակիներ ու Տօներ կը փնտռէ , խոր-  
հուրդ կուտանք իրեն որ իր տօները և կի-  
րակիները Յոյներուն հետ պահէ . որովհե-  
տե անոնցը բազմաամսեայ ուրիշ բոլոր ազ-  
գերուն , թուով չառ աւելի են . . . :

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԹԵԱՆ տերակի հրատա-  
րակութիւնը , որուն զուտ արդիւնքը , ինչ-  
պէս ըսած էինք , պիտի յատկանայ նորա-  
կազմ Հրատարակչական Ընկերութեան ,  
պիտի սկսի առաջիկայ 1901 յունուար 20 էն :

Ուստի անոնք որ կը փափաքին ունե-  
նալ իրենց քով մեր ազգային օրինաց բո-  
վանդակութիւնը , կրնան այժմէն բաժա-  
նորդագրուիլ Փօրմա առ Փօրմա ստանալու  
պայմանաւ :

Բաժանորդագրութեան համար պէտք է  
10 զրշ . ողջ կանխիկ զրկել « Արշալոյս » ի

Տնօրինութեան : Յետ տպագրութեան 12  
զրշ . ի պիտի վաճառուի :

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 22 Դեկտ . — Պօէրները ամ-  
սոյս 20 ին Պրիցթաունը գրաւեցին , ուրիշ  
գօմանտօ մին ալ Ձառութեանէն Օրանտ գե-  
տը անցեր և Գաբ մտեր է Ֆիլիքսթաունը  
գրաւող Պօէրները զօրացնելու համար :

Ըստ « Իմպիւնի Սթանտարտ » ի Բէմպըր-  
լին լրջօրէն վտանգի մէջ է : Կը պատմուի  
թէ Պօէրները Օրանտ գետէն նահանջած ժա-  
մանակին թողած թնդանօթներուն , ռազ-  
մավթերքներուն և պաշարներուն ուր գրտ-  
նուիլը գիտեն :

Չօրավար Սըր Ֆրէտէրիք Բէրնիլթըն  
Անգլիա կը վերադառնայ :

Ֆրէնչ զօրավարը ամսոյս 19 ին 2500  
Պօէր ետ մղած է Բրիւկէրստօրի մտերը :

Լոնտոն 23 Դեկտ . — Գաբ մտնող Պօ-  
էրներու հրամանատարներն են Ֆիլիք , Պօ-  
թա , Հապարօք հրամանատարները ու Հէր-  
ցօկ գաւառորդ :

### Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

— Գեր . Սահակ եպիսկոպոս Խապա-  
յեան , որ Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրու-  
թեան ժողովին պիտի նախագահէր , ընտ-  
րութեանց ձեւակերպութիւններուն լրա-  
նալը անկարելի նկատելով , յուստհատ  
երուսաղէմ վերադարձած է :

— Ռուսական հիւպատոսներու տուած  
տեղեկագիրներու համեմատ , Հայերու վի-  
ճակը բոլորովին անտանելի է թուրքիոյ  
Հայկական նահանգներուն մէջ :

#### ՉԻՆԱՍՏԱՆ

ԳԱՆԹՕՆԷՆ կ'իմացնեն թէ Օսի-Բիւնկ  
գաւառակէն բազմաթիւ անձեր , որոնք  
յայտարարութիւններով օտարականաց գը-  
լուիլը գնահատած էին՝ ձերբակալուած են :  
Ասոնցմէ քսանը այս օրերս պիտի գլխատ-

#### ՏԵՍԻԼ Զ .

##### ՄԵՐ ՅԱՐԳԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

) (

Վերջապէս հնչեց երջանիկ վայկեանը , յո-  
րում Պապ-Էլ-Լուքի կայսրանէն մինչև Հէլ-  
ուան հանդէսներու և լուսոյ մէջ պիտի ողող-  
ուէր , ի փառս . . . և ի պատիւ . . . ցայգա-  
հանդէսի կազմակերպիչներուն :

Հակառակ մեր Տօն-Քիչոթիներու բաղձա-  
նաց , հակառակ հաստատուն որոյմանց և ար-  
ձանագրութեանց , այսպ քաղաքին հոս ալ ոտն-  
ձգութիւն ըրած և դասուած էր ի շարս ազնը-  
ուականաց :

Պատ . Տնօրէն Ժողովը , անգուլ և անօգուտ  
ջանքերէ յետոյ , ստիպուած էր ակամայ իւր  
տոմսերը զրկել այնպիսի տեղեր , որոց նկատ-  
մամբ պահ մը առաջ , իր յուրջ խորհրդածո-  
րեանց մեջ՝ այնչա՛փ տեղը վերաբերութիւն մը  
ունեցած էր :

Մասնաւ որ ճէպընթացը ճիշտ ժամանակին  
Հէլուան կը փոխադրէր ցանցառաթիւ հանդիսա-  
կանները : Ասոնցմէ մաս մը սեղանի մը շուրջը  
հաւաքուած , մեծ անհամբերութեամբ կ'ուզէին  
Հայկական քայլերը լսել Ալպիօնի գաւառաց  
բերնէն . անոնց՝ որոնք հայերու սիրով կ'այրին  
ու մրկին եղեր . . . :

Հանդիսավայրը իր շքեղութեամբ մեծ ազ-

ուին , Ֆրանսական թնդանօթակիր մը Գան-  
թօնէն Օսի-Բիւնկ մեկնած է՝ վճռին գործադ-  
րութեանը հսկելու համար :

Միացեալ-Նահանգաց հիւպատոսը կը  
տեղեկանայ թէ Գանթօնի մէջ յայտարա-  
րութիւն մը փակցուած է , որուն մէջ կը  
ճանուցուի թէ՛ յունուար ամսոյն մէջ մեծ  
ապստամբութիւն մը պիտի ծագի հոն :

ՊՕՔՍԸՐՆԵՐՈՒՆ ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆԸ . —  
Բէքինէն հեռագիր մը կ'իմացնէ անգ-  
լիական գունդի մը կողմէ Գաօ-Լի-Լինկ  
գիւղին առումը :

Արշաւանքին հրամայող սպան կը յայ-  
տարարէ թէ՛ օտարականները երբէք չեն  
երևակայեր որ այդ կողմերը ինչ սոս-  
կալի ատելութեան առարկայ են Եւրոպացի-  
ները : Չինացի վերաւորեալ մը որ շու-  
տով հոգին փշած է , սապէս ըսեր է ի-  
րեն . « Կրնաք զիս սպաննել , բայց Պօք-  
սըրներուն շարժումը չպիտի կրնաք սպան-  
նել , որ պիտի տեւէ մինչև որ Չինաս-  
տանի մէջ գտնուող բոլոր ուսանեայ օտա-  
րականները վերնան :

ԿԻՅԵՕՄ ԵՒ ՍԱԼԱՀԷՏՏԻՆԻ ԳԵՐԵՉՄԱՆԸ .

— Դամասկոսի Վալին և Հազգը փաշա  
փոխ-միւտիրը , ընկերացած քաղաքին բոլոր  
պաշտօնակալներուն ու երևելիներուն ,  
կայսրան գացած են Գերմանական պատու-  
րակութիւնը ընդունելու , որ Սալահէտ-  
տին Սուլթանին գերեզմանին վրայ Կիլիօմ  
կայսեր նուիրած պսակը հանգիստաւորպէս  
պիտի դնէ : Պատուիրակութիւնը Ֆրանց  
ժովակալին հրամանատարութեան տակ դըր-  
ուած է և կը բաղկանայ 12 սպայէ , բոլորն  
ալ մեծ համազգեստով : Պատուիրակութեան  
հասնելուն թափօր կազմուած և զինուո-  
րական նուագախումբը Գերմանական քայ-  
լերգը նուագած է :

Չինուորները ցանկ կազմուած են կայա-  
րանէն մինչև Պատրաի պանդոկը . թա-  
փօրը առ նուազն 500 կառքէ կը բազ-  
կանար :

Կիլիօմին նուիրած ձուռակ արծաթեայ  
պսակին վրայ քանդակուած են Գերմանա-  
կան զինանշանը և Ղուրանէն հատուածներ :

Գեցութիւն կը գործէր ներկայից վրայ . հան-  
դէպ փայլուն գործելու համար ոչ մի ջանք իւր-  
նալուած չէր . Հէլուանի զբախտանման պար-  
տիզին ամեն կողմը լուսավառուած էր , զանա-  
զան ազգաց երիտեարանք գրօշներն կը ծածա-  
նէին օգին մէջ և լապտերներու լոյսին հետ  
գրկախառն , նոր շքեղութիւն մը կ'աւելցնէին  
արգէն շքեղ Հայկական հանդէսին :

Սեւ ռեհեկկոսներու մէջ մտած դասակի մը  
պատկանողներ , իրենց կուրծքին վրայ կրելով  
եռագոյն կոճակ մը , պարտիզին այս ու այն  
կողմը կը վազվզէին և նպատակ ունեցած ըլ-  
լալ կը թուէին սխալմամբ պիւքէն սպրդիլ ուր  
ընտիր ըմպելիներ և ճոխ սեղան կար , քան թէ  
արարողապետի պաշտօնը կատարել : Ո՛վ Հայ-  
կական սնափառութիւն , ինչ շուտ կը մոռնաս  
Պապիւնական առակը , որ կ'ըսէ , « Երախայ մը  
երբ մեծ մարդու ոտնաման կը հագնի , չ'կըր-  
նար քալել , այլ կը սայթաքի կիլիսայ : »

Վերջապէս դրամ և ջանք խնայուած չ'էր  
հանդիսավայրը զարդարելու համար , ի մէջ այ-  
լոց , մարդու մը տեսութիւնը կը փայտայտէին  
յաղթական կամարներն ու ծաղիկօղակներուն  
տեսքն . յայտնի էր թէ հանդիսի կազմակերպիչ-  
ները բան մը ըսել կ'ուզէին . . . գոնէ իրենք  
իրենց համար . . . :

(Մնացեալը յաջորդով)

գամ համաձայնած եմ , և ե՛նչ միայն շոգեկառ-  
քերը , այլ նոյն իսկ կազինուն և պարտէզը մեր  
տրամադրութեան տակն են այսօրուընէ սկսեալ :

Մեզի կը մնայ տոմսերը պատրաստել և զանոնք  
անվճարներու մէջ զետեղելով մեծամեծ մարդ-  
կանց զրկել :

ՕՏԱՇԽԵԱՆ . — Այդ մասը որ և է տպա-  
րանի կրնանք յանձնարարել :

ՇԱԹՕԵԱՆ . — Արգէն թղթավաճառ Բրեւ ի  
խօսած եմ , նա պիտի շինէ և միեւնոյն քար-  
թէ եօթն գոյներ պիտի յարմարցունէ մինչև  
ուրիշ օր , որ խօստացաւ ալ :

Ինչպէս տոմսերու գործը , նոյնպէս ալ Պ .  
Ա . ի պատուիրակի որ Պիւքէն կառուցանելու  
համար պատրաստ վիճակի մէջ գտնուի , մեր  
հրամանին տակը :

ԹԱԹՕԵԱՆ . — Ըսել է ամեն բան լրացած  
է . . . :

ՇԱԹՕԵԱՆ . — Այո՛ , կը մնայ մեզի պատ-  
րաստուիլ արարողապետի և վերին հսկողու-  
թեան պաշտօնը կատարելու համար նոր զգեստ-  
ներ գնել :

ԹԱԹՕԵԱՆ . — Հէլուան , ցայգահանդէս ,  
օ՛ն անդր . . . սպասել և յուսալ . . . :

) (

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 7149, 1760, 7653, 613, 9074, 1395...

ՀՐԷՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Table with 6 columns of numbers: 900, 8357, 5530, 6726, 175, 1492...

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՏԻՎԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուֆիլէն փոխադրած է Եարա Ապտիւլ Ազիզ...

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

ԳԵՐՁԱԿ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Ետա Պապ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ժՕՆ ԳՕԼԱԳՕԹԻ նման կարգերը տան մը մէջ աշխատելով արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանդուցեալ Նուպար Փաշայի Տայրաին գիմացը, նորաչէն խանութներուն մէջ:

Թէ՛ իրեն հիմնող երկու սեռէ Պատ. յաճախորդը ըստ ամենայնի դո՛ւ պիտի մնան, արհեստի նրբութիւն անհեղձ, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, եւ մանաւանդ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով:

ՄԻՒ ՄԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ Սէլվաձեւն վաճառ ստան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 '1/2 ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 շրճ է սկսեալ մինչեւ 2500 շրճ. Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, Լ. Ե. Ե. սիտէ ժամացոյցներ. պատի և քօնու լի Բ. Կ. մազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեացի Ժո. Նոկրաֆներու:

Տպագրութիւն ԺՊՊՊՎՐԴԱԿԱՆ ՏԳԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԱԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ 6500 ՄԱՆԱՃՈՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյականներով եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է. ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻԲԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ-ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԿԱԻՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ Ի յատկանշիկն:



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններ մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ՉՍՓԱՒՈՐ

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՏԳՈՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՄ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՔԸ

Օտանիյէ դեղատանին ղիտացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երջարտեալաններ, Գիւլեր, Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վստահուին հետեւեալ դրբերն:

1. ԲՆԱՇԵՍԱՐՀԻԿ ԲԱՌԱՐՍՆԻ ԵՒ Ա. Ե. Ե. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արգէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:

2. ՈՐՔՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիւրուած է եղբր:

3. ՀԱՌԱՔԱՏՈՅ հայոց ժողովրդական երգերու քաղաքի տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Էւոն եղիւղարեանցի:

4. ՉՈՒՍՐՁԱԼԻ Անիքթոտներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը և գրիչ նոր հրատարակութիւններ:

Ա Ձ Դ

Եզրիպտական ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով այժմ Եզրիպտոսի համար Արեւելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամէն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր պմենայն փութով և չափաւոր դիմով:

Քաղաքէս հետու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ դումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յԱզգ. վարժարանի ի Տարաքէլ-Կիւնէիս:

Ա. ՊԱՆԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ (Գաղթականաց կեանքէն) ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՐԱՆԳՐԱՏՈՒՆԸ

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒՆ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԵՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամէն նէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ինպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրոսպարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործաւ կատար յԱզգ. քանդակար